չէնքին ճարտարապետութիւնը կը համարձակեն մեզ առ այն։ Առաջին անգամ 1009 ին, Ռուս նախարարք հրաւիրած են զՀայս 'ի Քիեւ, յօգնութիւն 'ի պատերազմունս ընդդէմ Խրոխան Բոլեսլաւի, որ այն ատեն արշաւելով կ'ապականէր նոցա երկիրը։ Հայք 'ի Քիեւ անցան ընդ այլ մասունս Ռուսաց աշխարհին և բնակեցան Յիլվով և 'ի Լուցք։

Երկրորդ անգամ զՀայս յօգնութիւն կանչեց, Թաթարաց հետ մէկտեղ՝ 1280 ին Լեւոն Դանեղլովիչ Կալիցքի, ընդդէմ պատերազմաց դրացի ազգաց. Հայք այն պատերազմերուն հաստ թիկունք եղած են Լեւոն Դանիելովչի. զի իշխանս երկիրներով վարձատրած է նոցա ծառայութիւնները։ Հայք հաստատած են իրենց բնակութիւնը Կամենիցի մօտ, այն տեղը՝ որ մինչև ցայսօր Արմեանէ կը կոչուի։ Անշուշտ այս միջոցս չինել են նոքա իրենց առաջին եկեղեցին, հին և քարուքանդ Պետրիդաւրի (Կամենիցի) աւերակաց վրայ, Թաթարաց տիրապետութեան միջոց։... Ինչպէս շրջաբնակ ժողովուրդք, նոյն և բնակիչք Արմեանէ գիւղին, աւանդութեամբ գիտեն՝ թէ գիւղին նախկին բնակիչքը գաղթած եկած են 'ի Հայաստանէ...։ Հետևաբար կարող ենք ասել, որ գիւղս նախկին բնակիչքը, թողլով իրենց ազգին անունը գիւղին ժառանգութիւն, անցած են 'ի Կամենից-Պետրիդաւրիա, և նորա աւերակաց վրայ շինել են իրենց բնակութիւնը։ Ցայտնի է՝ որ այն ատեն սակաւաւոր եղած են Հայք, զի նոցա երրորդ գաղթականութիւնն 'ի Հայաստանէ 1331 ին, բազմացուցած է նոցա թիւը, Կորիաթ իշխանի պայազատաց միջոց։ Մեք կարծեմք՝ թէ Հայք թէպէտ և սա-